Արձանագրություն N 3
Առողջապահության նախարարության կարիքների համար համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «26» «Դեկտեմբեր» 2018թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մ.Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Ա.Մուրադյան Հ.Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ.Մնացականյան

1. Հայաստանի Հանրապետության ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Մ.Մխիթարյան)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Հարցման եզրակացությունը ստացվել է 25.12.18թ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի ամփոփման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

1. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթող ճանաչել՝ «Սերվիս պլյուս» ՍՊԸ՝ 134.420 ՀՀ դրամ պայմանագրային գումարով (գինը իր մեջ ներառում է ծառայությունների միավոր գների հանրագումարը):
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս, որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 2018 թվականի դեկտեմբերի 27-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
3. Հաշվի առնելով, որ «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգը իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան, ուստի որոշվեց համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո կնքել պայմանագիր, ընդ որում

պայմանագրի առավելագույն գինը կկազմի ծառայությունների համար 2019 թվականի համար հատկացված գումարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Ա.Մուրադյան

---------- Հ.Սարգսյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան